ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի «Ավշարի միջնակարգ դպրոցե ՊՈԱԿ-ի **«Երաժշտություն»** (5 դասաժամ, ուսումնասիրվում է 1 կիսամյակ), «Կերպարվեստ» **(5 դասաժամ, ուսումնասիրվում** է 1 կիսամյակ), «Ռուսաց լեզու» (8 դասաժամ), **«Պատմություն» (14 դասաժամ)**, ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման **փուլն անցկացվում** է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի **հարցաշարը կազմում** է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն **անցկացնում** առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրա·ույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- 'Հանրակրթության մասին' ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային ·րքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, - ՀՀ արական սեռի քաղաքացիները նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 4-ից մինչև սեպտեմբերի 29-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա հոկտեմբերի 2-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Արարատի մարզի Ավշարի միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զան·ահարել՝ (077) 79-90-13 հեռախոսահամարով: